

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՍԵՐՎԱՆՏԵՍԻ ԴՕՆ-ՔԻՇՕՏ ԼԱՄԱՆՇԵՑԻՆ

Մայիսի 5, 6 և 7-ին (ն. տ) Սպանիան հանդիսաւոր կերպով տօնեց մի անմահ վէպի 300 ամեակը: Սերվանտէսի, Դօն-Քիշօտ Լամանշեցին է այդ վէպը:

Սերվանտէսի այս վէպը առաջին անգամ տպագրութեամբ լոյս տեսաւ Մադրիդ քաղաքում 1605 թուին և մեծ հետաքրքրութիւն առաջ բերեց կարդացող հասարակութեան մէջ, և այն օրից տարածուեց ժողովրդի մէջ, թարգմանուեց զանազան եւրոպական լեզուների, կրճատուեց մանուկների և երիտասարդների համար ¹⁾:

Դրուեցին անթիւ մատենախօսական յօդուածներ Դօն-Քիշօտի մասին և ամեն մէկն էլ իւր ժամանակի և շկոյայի համեմատ զանազան մտքեր արտայայտեցին այդ վէպի վերաբերմամբ:

Սպանիական ճեմարանը ձեռնարկեց Սերվանտէսի Դօն-Քիշօտի տպագրութիւնը, անուշադիր թողնելով դորա առաջին տպագրութիւնը, և այդ եղաւ պատճառ, որ մինք ցայսօր չունինք մի ստոյգ բնագիր: Սերվանտէսը ինչպէս և ինքն է ասում, գրելով այդ վէպը անկասկած ցանկանում էր թուլացնել ասպետական բովանդակութեամբ գրուած գրքերի հեղինակութիւնը:

Սերվանտէսի վէպի յաջողութեան գաղտնիքը հաղիւ թէ երբեկեց պարզապէս: Եւ այդ անհրաժեշտ է. Համլէտը նոյնպէս դեռ մեծ ուշադրութիւն է գրաւում, չնայելով որ նոյնպէս անյայտ է նորա յաջողութեան գաղտնիքը: Սերվանտէսը սպանիական ցեղի հոգեկան զգացմանց ճիշտ արտայայտողն էր. նախկին ծառայող, որին չէր յաջողել այդ ասպարէզը, նա մեծ անուն և

¹⁾ Հայերէն միակ թարգմ. է Յար. Սարկ. Աղանեանցի 1878

վաստակեց իւր Դօն-Քիշօտով: Նա պարապել է գրականութեան զանազան ճիւղերով. եղել է Թատերագիր, բանաստեղծ, նորավէպ գրող. նա է հեղինակը մի երկար և ձանձրալի պատմութեան գրութեան յունական վէպերի ոճով (Դեյփօփօր) և վերջապէս Դօն-Քիշօտը, որը կարելի է համարել սպանիական առաջին վէպ, բառի բուն նշանակութեամբ:

Սպանիայի գրականութեան գլխաւոր տեսակներն այդ շրջանումն էին ասպետական վէպ, յունական ծագում ունեցող պատմութեան, իտալական ծագում ունեցող նորավէպեր (Բօկաչիօն և նորա յաջորդ) իտալական ասպետական դիւցազններգութիւն (Բենբօ, Պուլչի, Արիօստօ) և վերջապէս իրական նորավէպեր: Սորանից պարզ երևում է որ յունական վէպերը Դօն Քիշօտի վրայ ազդեցութիւն չեն կարող ունենալ իսկ իտալական նորավէպերը ունեցան փոքր ազդեցութիւն Սերվանտէսի *novelas ejemplares*-ի վրայ:

Ասպետական վէպերը Դօն-Քիշօտի վրայ բոլորովին ազդեցութիւն չպէտք է ունենան: Դօն-Քիշօտը խելագարուեց կարգալով այդպիսի վէպեր և նորա մէջ միտք ծագեց իրեն օրինակի մէջ կենդանացնել Թափառական ասպետութեան յատկութիւնները բայց աւելի պայծառ և զեղարուեստօքն:

Յանկալով ասպետական վէպերը երգիծաբանականի վերածել, հեղինակը սկզբում հետևում է Ամադիս Գալիացուն, բայց որքան վէպը շարունակւում է, այնքան աւելի թուլանում է ասպետական վէպերի ազդեցութիւնը և դառնում է ինքնուրոյն: Նոյնը կարելի է ասել և իտալական երկասիրութիւնների մասին, Արիօստօնը Սերվանտէսի սիրելի հեղինակն էր, մինչև անգամ Դօն Քիշօտի յառաջաբանի մէջ կան փոփոխութեան կտորներ Արիստօից: Այսպէս ուրեմն Սերվանտէսը սկզբում ունեցել է մի որոշ նախագիծ իւր վէպի համար և հետևել է ուրիշ հեղինակներին, բայց վերջը ներշնչուած ինքնուրոյն բանաստեղծական ոգով, մոռացել և թողել է հետևողութիւնը և արտադրել է իւր սրտի զգացութեան ու հոգու տպաւորութիւնները:

Սերվանտէսի վէպի ձևը ժամանակակից և սովորական վէպի ձև է արկածներով. այդպէս էին յօրինւում յունական սիրային վէպերը: Սերվանտէսը իւր հերոսին ուղարկում է ճանապարհորդելու և նորա միջոցով արտայայտում է իւր զգացմունքները: Ինքը Սերվանտէսն ասում է, որ այդ գիրքը ունի մեծ ինքնակենսագրական նշանակութիւն: «Այս գիրքը — ասում է նա Դօն Քիշօտի մասին — կա-

րևոր գործ է իմ կեանքի համար. միայն ինձ համար ծնաւ Դօն Քիշտը, ինչպէս և ես նորա համար. նա գիտէր գործել, իսկ ես գրել, մենք նորա հետ կազմում ենք մի հոգի եւ մի մարմին:

Ինչպէս արդէն ասինք Սերվանտէսը սպանական ցեղի հոգեկան զգացմանց ճիշտ արտայայտողն էր բոլոր դրական և բացասական կողմերով: Դեկադէնտները իզուր են կոչում Սերվանտէսին ապագայի մարգարէ. նա էր սոսկ ներկայի մի անաման նկարիչ: Նա պարզ նայում է կեանքի վրայ և դորա համար էլ նորա դատողութիւնները ունին որոշ չափով նշանակութիւն իբրեւ մի հասկացող և խելացի մարդու դատողութիւններ:

Դօն Քիշտ ուսումնասիրողները ընդունում են, որ այդ գիրքը բովանդակում է իւր մէջ շատ ճիշտ և քաղաքակրթական պատմական նիւթեր: Այս նիւթերը ներկայացնում են հեղինակի աշխարհայեացքը, որը նա արտայայտում է իւր հերոսի միջոցով:

Բոլոր դասակարգները Սերվանտէսի վէպի մէջ գտել են իրանց արժանի տեղը և նկարագրուել են այնպէս, ինչպէս որ նկատուել և ուսումնասիրուել են Սերվանտէսից: Այս է վէպի ներքին արժանաւորութիւնը, իսկ իւր վրայ ուշադրութիւն են դարձնում երկու գլխաւոր հերոսներ՝ ինքը իդիալական ասպետը Դօն Քիշտը և նորա անձնուէր գինակիր Մանխօ Պանչօն: Այս երկուսն էլ ներկայացնում են բարդ աւելի ճիշտ տարբեր ընոյթներ. տէրը և ծառան լուսաւորուած են բարեսրտութեան ճրագով. և այդ բարեսրտութիւնը, մեղմութիւնն ու անձնուիրութիւնը աւելի սերտ կապում են նրանց միմեանց հետ քան որ և է փառասիրական դրդումներ և հաշիւներ: Մտերիմ կապերը Դ. Ք. և Մանխօի մէջ բացատրուում են ոչ թէ աստուածային ազդեցութեան զօրութեամբ, այլ բարեսրտութեամբ և մարդկութեամբ, որը յատուկ է ասպետին և գինակրին:

Սպանական կրիտիկոսները շատ ջանացին գտնել Դ. Ք. օրինակը Սերվանտէսի բարեկամների մէջ, որը և նոցա մասամբ յաջողեց, բայց ով և լինէր Դօն Քիշտը, Սերվանտէսի կնոջ հօր եղբայրը թէ մի այլ անձ, դա մեզ չի կարող հետաքրքրել: Իհարկէ Սերվանտէսը ի նկատի ունէր Դօն Քիշտի նման օրինակներ, բայց դրանք մնում են իբրեւ բանաստեղծական մօտիւններ, իսկ հեղինակի հնարագիտութիւնը տուեց նորան նոր և օրինակելի փոփոխութիւն:

Գրականական գրութեքի արժէքը որոշում է ոչ թէ նոր-

նիւթերի քանակը այլ մարդկային մտքի գործունէութեան աստիճանը և այն ազնիւ և բարձր զգացմունքները, որ արտայայտում է հեղինակը Աստուածային ներշնչման քանակով, որը արտայայտուում է վէպի մէջ: Այս է Սերվանտէսի մատուցած ծառայութիւնը:

Կարդալով այս անմահ վէպը, մարդկային շատ սերունդներ հրճուում էին, մխիթարւում, զրադուում, ներշնչւում բարեսրտութեան և խղճի լաւ և բարձր զգացմունքներով:

Ա. Վ.

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՐԱԴԻՆ՝ ԻՆՉՊԷՍ ԵՐԿՐԻ ՏԱՔՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐ, «Harpers Magazine» ում այս հետաքրքրական վերնագրի տակ զետեղուած է պրօֆ. Բուզիրֆօրդի գիտական յօդուածը: Նա հաւատացնում է, որ թէպէտև տաքութեան մի մասը առաջ է գալիս զանազան քիմիական միութիւններից, բայց տաքութեան մեծագոյն մասը ստացւում է այն մարմիններից, որոնք ընդունակ են մեծ քանակութեամբ աաքութիւն արտադրել: Մի տարուայ ընթացքում, ասում է նա, մէկ ֆունտ բաղին նոյնքան տաքութիւն է տալիս, որքան կարելի է ստանալ 100 փութ ամենալաւ ածուխ այրելուց: Այդ ժամանակամիջոցից յետոյ բաղին պահպանում է իր առաջուայ ոյժը և այդ կտեւէ հարիւրաւոր դարեր: Բաղի պարունակող մարմինները ցրուած դրութեան մէջ են թէ օդի և թէ երկրագունդի պատեանի մէջ: Այժմ հարց է առաջանում, թէ որքան մեծ է այդ նիւթի քանակը և թէ լաւական է արդեօք երկրային տաքութիւն առաջացնելու համար: Պրօֆ. Բուզիրֆօրդը ասում է որ կարելի է դրական պատասխան տալ, որովհետև եթէ մէկ գրամ բաղին այնքան տաքութիւն է տալիս, որ կարելի է եռցնել 100 գր. ջուր (1° ց.) ուրեմն հասարակ հաշիւը ցոյց է տալիս, որ երկրից արտադրուող տաքութիւնը կարելի է ստանալ 270 միլիօն տոնն բաղիից: Ուրեմն կարելի է համարձակ ենթադրել, որ եթէ բաղին հաւասարաչափ է տարածուած երկրագունդի պատեանի մէջ, այն ժամանակ վերևը յիշուած մօտաւոր թիւը շատ չնչին մասն կլինի այն բոլորի, ինչ որ երկրագունդը պարունակում է իր մէջ:

ՆՇԱՆԱԻՈՐ ՊԵՂՈՒՄՆԵՐ: Նորերումս Անգլիացի Թէոդոր Դէվիսը նշանաւոր հնախօսական գիւտեր է արել Նգիպոսոսում: Փետրուարի 12-ին Դեւիսի առաջնորդութեամբ բանող բանուորները Բամզէս IV և Բամզէս XII յայտնի գերեզմանների մէջ